ՀՀ ԵՐԵՎԱՆԻ « Հ. 120 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

22.11.2023թ

«ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ տնօրեն Ռաֆայել Պողոսյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

<<Երևանի h 120 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ միջև 12.10.2023թ. կնքված N Ե120ՀԴ-ԳՀԱՇՁԲ-23/01 ՊՈԱԿ-ի կարիքների համար կապային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի, ինչպես նաև, 08.11.2023 թ. ֆինանսական միջոցների առկայության մասին համաձայնագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ նոյեմբերի 28-ը: Պայմանագրով սահմանված ժամկետում «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ ստանձնած պարտավորությունները սկսել էր կատարել ժամանակին:

ՀՀ պետական վերահսկողության ծառայության 10.11.2023թ. թիվ Ե/2300-23 գրությամբ, որը դպրոցը ստացել է էլ փոստին ուղարկվելով, պարզվել է, որ «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ տնօրեն Ռաֆայել Պողոսյանը հանդիսացել է «ՌԱՖՆԱՐ» ՍՊԸ-ի իրական շահառու, որը 20 հունիսի 2023թ. մինչև 20 հունիսի 2025թ. ներառված է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ՊՈԱԿ-ը անմիջապես համապատասխան գրությամբ տեղեկացրել է իր վերադասին, և 17.11.2023 թ. Ն/60898-23 գրությամբ Երևանի քաղաքապետարանից ստացել ենք պատասխան կարգադրություն: Հիմք ընդունելով վերոգրյալը, իրավիճակի անհնարինությունը <<Երևանի h 120 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է <<Երևանի h 120 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ-ի միջև 10 հոկտեմբերի 2023թ. կնքված N Ե120ՀԴ-ԳՀԱՇՁԲ-23/01 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից: Բոլոր գործողությունները կատարվում են ՀՀ գնումների մասին օրենքի դրույթներով: «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, կամ տուժանքներով սահմանված որակավորման՝ 418275/չորս հարյուր տասնութ հազար երկու հարյուր յոթանասունհինգ / ՀՀ դրամ և պայմանագրի 278855/ երկու հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր հիսունհինգ/ դրամ ապահովումների գումարները <<Երևանի հ 120 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Կենտրոնական գանձապետարանի Հ/Հ 900018003666 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի դրույթները, «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ-ին առաջարկվում է 10 օրացուցային օրվա ընթացքում տուժանքներով սահմանված որակավորման՝ 418275/չորս հարյուր տասնութ հազար երկու հարյուր յոթանասունհինգ / ՀՀ դրամ և պայմանագրի 278855/ երկու հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր հիսունհինգ/ դրամ ապահովումների գումարները <<Երևանի հ 120 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Կենտրոնական գանձապետարանի հ/հ 900018003666 հաշվեհամարին փոխանցել : Գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասին 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին:

ԴՊՐՈՑԻ Տնօրեն՝ Ա.Քոչարյան